ՆԱԽԱԲԱՆ

«Հայ ժողովրդական բեմադրական պարը» հետազոտության հիմնական նպատակը հայ պարային մշակույթի մի ուղղության՝ ժողովրդական բեմադրական պարարվեստի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրումն է XX դարի սկզբից մինչև 30-ական թվականները:

Հայ էթնոպարագիտության զարգացման հետ է կապվում հայ պարարվեստի մշակված պատմություն ունենալու հարցը: Այն հնարավորություն է տալիս պատմամշակութային գործընթացների համատեքստում առավել ճշգրիտ լուսաբանել ազգային պարային մշակույթին վերաբերվող տարբեր հարցեր:

XX դարի առաջին կեսին հայ ժողովրդական պարը բեմական նորովի մեկնաբանություններ է գտնում, որը դրսևորվում է ժողովրդական ինքնագործ ու պրոֆեսիոնալ պարային մշակույթում:

Հայ պարարվեստի այդ շրջանի վերաբերյալ պատմամշակութային ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով:

XX դարի առաջին քառորդում Հայաստանում տեղի ունեցան քաղաքական ու մշակութային խոշոր տեղաշարժեր, որոնք արտացոլվեցին նաև պարային մշակույթում:

Սույն հետազոտությամբ փորձ է արվում ներկայացնել այդ շրջանում հայ ժողովրդական պարարվեստի բնագավառում կատարված փոփոխությունները, նոր ուղղությունների ձևավորման առանձնահատկությունները, այդ թվում՝ պարակրթության ուղղությունները, արտերկրից ներմուծված ոճական ազդեցությունները և այդ պարագայում ավանդական պարի պահպանումը, որն արդեն տեղափոխվում է նաև բեմ:

Աշխատությունն ըստ էության բեմական պարարվեստի նախորդ շրջանի (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ) պատմության շարունակությունն է և ներկայացնում է միայն ժողովրդական բեմադրական պարարվեստը: Այդ ուղղության վերաբերյալ ուսումնասիրությունները սակավաթիվ են, իսկ հայ դասական պարարվեստի ուսումնասիրությունն առանձին թեմա է:

Այս հետազոտությունը ոչ միայն ուղենշում է ժողովրդական ավանդական պարարվեստի կապը բեմադրական պարարվեստի հետ, այլև ընդգծում այն նախապայմանները, որոնց առկայությամբ ձևավորվեց ու զարգացավ հայ պրոֆեսիոնալ ժողովրդական բեմադրական արվեստը:

Աշխատանքում փորձում ենք ներկայացնել նաև հայ էթնոպարագիտության լիսիցյանական հիմունքները, նպատակ ունենալով ամբողջացնել հայ պարարվեստի վերաբերյալ եղած տեսական գիտելիքները:

Ուսումնասիրությունը հիմնված է էթնոպարագիտության ասպարեզում ընդունված մեթոդների վրա, որի ատաղձը հայտնի ազգագրագետ, պարագետ Սրբուհի Լիսիսցյանի մշակած պարագիտության հիմունքներն են, ըստ որի կատարվում է ժողովրդական պարային նյութի գրանցում, ժանրերի դասակարգում և վերլուծում:

XX դարի սկզբից մինչև 30-ական թվականները հայ ժողովրդական բեմադրկան պարարվեստում նշանակալից գործունեությամբ առանձնանում են այդ ասպարեզի երախտավորներ Սրբուհի Լիսիսցյանն ու Վահրամ Արիստակեսյանը:

Սրբ. Լիսիցյանը մեծ ներդրում ունի որպես տեսաբան ու բեմադրող, իսկ Վ. Արիստակեսյանը՝ հայ ժողովրդական պարերի բեմադրող ու շնորհալի պարող:

Աշխատությունում հակիրճ անդրադառնում ենք Սրբուհի Լիսիցյանի և Վահրամ Արիստակեսյանի կենսագրություններին, գիտական և մշակութային գործունեությանը՝ տաղանդա-

վոր այդ արվեստագետների դիմանկարներն անավարտ չթողնելու համար:

Սույն աշխատանքը նպատակ ունի վերհանել XX դարի 20-30-ական թվականներին հայ պարարվեստի այս ասպարեզում տեղի ունեցած իրողություններն ու հետագա զարգացումները: